INECOBANK

Գնառաջարկների ներկայացման հրավեր

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ 15-րդ կետում նկարագրված չափանիշներով **պլանշետների** ձեռքբերման վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **30.06.2026թ. ժամը 17:00՝**
   - Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը՝ **PROC16062026/պլանշետներ:**
     Գնառաջարկի փաթեթն անհրաժեշտ է ուղարկել «rar» տարբերակով, կոդավորված, իսկ կոդն ուղարկել ԳՆՀ ավարտից հետո, procurement@inecobank.am էլ. հասցեով, 01.07.2026թ.-ին, մինչև ժամը 11:00,
     ԿԱՄ
   - Փաստաթղթային տարբերակով, փակ, կնքված ծրարով՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝
   - ԳՆՀ կոդը՝ **PROC16062026/պլանշետներ,**
     - մասնակցի անվանումը,
     - ներկայացման ամսաթիվը,
     - ստացող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:

3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
   Կոնտակտային անձ՝ Գնումների բաժին, Հովհաննես Միհրյան, +374 33 08 80 15:
4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
   - Գնառաջարկ, որը ներառում է տեղեկատվություն մատակարարման ժամկետի և վճարման պայմանի վերաբերյալ,
   - Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոններին համաձայնությունը:

8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:

INECOBANK

13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

**15. ԳՆԱՌԱՋԱՐԿ**

| | Գնման առարկայի անվանումը և նկարագիրը | Քանակը (հատ) | Միավորի արժեքը ՀՀ դրամ ներառյալ հարկեր | Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ ներառյալ հարկեր |
|---|---|---|---|---|
| 1 | **Պլանշետ**<br><br>***Տեխնիկական բնութագիր***<br><br>• Սարքերը պետք է լինեն պրոֆեսիոնալ մոդելային շարքից (Professional / Flagship)<br>• Օպերացիոն համակարգը՝ Android, տարբերակը՝ 15 կամ ավելի բարձր<br>• Օպերատիվ հիշողություն՝ 8GB կամ բարձր<br>• Հիմնական հիշողություն՝ 128GB կամ բարձր<br>• Դիսփլեյի տեսակ IPS/LCD կամ ավելի բարձր որակի<br>• Էկրանի չափը 10 – 11 (inch դույմ) միջակայքում<br>• WiFi այո<br>• NFC այո<br>• 4G LTE ցանց՝ կարող է չապահովել<br>• Մարտկոցի հզորությունը՝ ոչ պակաս քան 8000mAh<br>• Դիմային և հիմնական տեսախցիկներ<br>• Հայտարարության տարին՝ 2025 – 2026թթ.<br>• Սնուցման բլոկ ներառյալ իր պարամետրերին համապատասխան<br>• Երաշխիք՝ ոչ պակաս քան 1 տարի: | 10 | | |
| 2 | Առաջարկվող պլանշետի արտաքին պատյան, մոնոտոն, մուգ գույնի | | | |

*Մատակարարման ժամկետը ___________ օրացուցային օր ժամանակահատվածում:*

*Պահանջվող կախնավճար_________________________________դրամ:*

___________________________________________*Մասնակցի/կազմակերպության անվանումը*

_______________________________________*Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝*

"        " ______________*2026թ.*

*Կ.տ*